COMMONSPIRIT HEALTH
Ֆինանսական աջակցության ամփոփում

Dignity Health-ը՝ CommonSpirit Health-ի մասնաճյուղը, հանձնառու է ստեղծել ավելի առողջ համայնքներ՝ ֆինանսական աջակցություն տրամադրելով այն անձանց, ովքեր բուժսպասարկման կարիքներ ունեն և ապահովագրված չեն, թերի են ապահովագրված, իրավասու չեն պետական որևէ ծրագրի համար կամ այլապես ի վիճակի չեն վճարել: CommonSpirit Health-ի Ֆինանսական աջակցության քաղաքականությունը նկարագրում է ֆինանսական աջակցության այն ծրագրը, որոնք հասանելի են ապահովագրություն չունեցող կամ թերի ապահովագրված հիվանդներին, ովքեր բավարարում են եկամտի որոշակի պահանջներին՝ օգնելու վճարել բժշկական տեսանկյունից անհրաժեշտ CommonSpirit Health-ի կողմից տրամադրվող հիվանդանոցների հիվանդանոցային ծառայությունների համար: Չապահովագրված հիվանդն անձ է, ով չունի առողջության ապահովագրության ծածկույթ, լինի դա մասնավոր կամ պետական ապահովագրություն և ով իրավունք չունի որևէ մեկից փոխհատուցում ստանալ իր հիվանդանոցային հաշիվների համար: Թերի ապահովագրված հիվանդն անձ է, ով ունի առողջական ապահովագրություն, բայց ունի հիվանդանոցային մեծ գումար կազմող հաշիվներ, որոնք ոչ ամբողջությամբ են փոխհատուցվում իր ապահովագրության կողմից:

Անվճար խնամք

- Եթե դուք ապահովագրված չեք կամ թերի եք ապահովագրված՝ ունենալով դաշնային աղքատության մակարդակի մինչև 250% ընտանեկան եկամուտ, դուք կարող եք իրավասու լինել՝ ստանալու անվճար հիվանդանոցային ծառայություններ:

Զեղչված ծառայությունների տրամադրում

- Եթե դուք ապահովագրված չեք կամ թերի եք ապահովագրված՝ ունենալով դաշնային աղքատության մակարդակի 250%-400% ընտանեկան եկամուտ, դուք կարող եք իրավասու լինել, որպեսզի հիվանդանոցային ծառայությունների ձեր հաշիվները կրճատվեն ամենաբարձր գումարի չափով, որը խելամտորեն ակնկալվում է, որ կվճարվի պետական վճարողի կողմից և որը սովորաբար այն գումարն է, որ Medicare-ը կվճարեր նույն ծառայությունների համար:
- Եթե դուք ապահովագրված չեք կամ թերի եք ապահովագրված՝ ունենալով դաշնային աղքատության մակարդակի 401-500% ընտանեկան եկամուտ, դուք կարող եք իրավասու լինել, որպեսզի ձեր հիվանդանոցային ծառայությունների հաշիվները կրճատվեն Սովորաբար հաշիվ ներկայացվող գումարի չափով (AGB), որը գումար է, որ սահմանվել է դաշնային օրենքով, որպեսզի արտացոլի մասնավոր առողջապահական ապահովագրողների և Medicare-ի կողմից հիվանդանոցին վճարվելիք գումարը (ներառյալ համավճարները և նվազեցվող գումարները) բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունների համար:

Վերանայվել է՝ 1 հուլիսի 2022 թ.

Աջակցությունն առաջարկվում է նրանց, որոնց ընտանեկան եկամուտը համապատասխանում է վերը նշված կատեգորիաներից մեկին և ովքեր ունեն.

- Հաշվի մնացորդ, որն ընդհանուր կազմում է տաս ($10.00) դոլար կամ ավելի շատ,
- Ձանք գործադրելով համագործակցել են, որպեսզի սպառեն վճարման մյուս բոլոր ընտրանքները և
- Լրացրել են Ֆինանսական աջակցության դիմումը և տրամադրել են եկամուտը ստուգելու համար անհրաժեշտ աջակցող թղթաբանությունը:

ՆՇՈՒՄ. Որոշ դեպքերում հիվանդներին կարող է տրվել ֆինանսական աջակցություն՝ առանց պաշտոնական դիմումի: Մանրամասները նշված են Ֆինանսական աջակցության քաղաքականությունում:

Եթե Ֆինանսական աջակցության քաղաքականության ներքո դուք իրավասու եք Ֆինանսական աջակցության համար, ձեզնից չի պահանջվի վճարել ավելի շատ, քան վերը նկարագրված և սովորաբար հաշիվ ներկայացվող գումարն է: Եթե դուք համապատասխանում եք, կարող եք նաև հայցել անտոկոս ընդլայնված վճարման պլան:

Ձեզնից երբեք չի պահանջվի կատարել կանխավճար կամ վճարման այլ եղանակներ, որպեսզի ստանաք շտապ օգնության ծառայություններ:

Հիվանդանոցի Ֆինանսական աջակցության քաղաքականության և Ֆինանսական աջակցության դիմումի ձևաթղթերի անվճար պատճենները հասանելի են առցանց՝ ձեր հիվանդանոցի ստորև նշված կայքէջում կամ հիվանդանոցի հիմնական մուտքի մոտ գտնվող ընդունարանի տարածքում: (Հետևեք «Ընդունարան» կամ «Գրանցում» նշաններին): Այս փաստաթղթերի անվճար պատճենները պահանջի դեպքում կարող են փոստով ձեզ ուղարկվել, եթե զանգահարեք ձեր հիվանդանոցի Հիվանդների ֆինանսական ծառայություններով զբաղվող բաժնի ստորև նշված հեռախոսահամարին:

Traducción disponible: Կարող եք նաև անվճար ստանալ այս փաստաթղթերի իսպաներեն և այլ լեզվով թարգմանություններ, ձեր հիվանդանոցի կայքէջում, ձեր հիվանդանոցի ընդունարանում կամ զանգահարելով ձեր հիվանդանոցի հեռախոսահամարին:

CommonSpirit Health-ի ֆինանսական խորհրդատուները պատրաստ են պատասխանել հարցերին, տեղեկատվություն տրամադրել Ֆինանսական աջակցության քաղաքականության վերաբերյալ և օգնել ուղղորդել ձեզ ֆինանսական աջակցության դիմումի գործընթացում: Ֆինանսական խորհրդատուները կարող են նաև ձեզ տեղեկատվություն տրամադրել հիվանդանոցային հաստատության AGB-ի տոկոսի մասին և թե ինչպես են AGB-ի տոկոսները հաշվարկվում: Մեր անձնակազմը գտնվում է հիվանդանոցի ընդունարանում և նրանց հետ կարելի է կապվել ստորև նշված հեռախոսահամարով:

Բացի այդ, կան անկախ կազմակերպություններ, որոնք կարող են օգնել ձեզ հասկանալ հաշիվների ներկայացման և վճարման գործընթացը և ձեզ տեղեկատվություն տրամադրել Covered California-ի և Medi-Cal-ի ենթադրյալ իրավասության վերաբերյալ: Մանրամասների համար խնդրում ենք այցելել Health Consumer Alliance-ի կայքէջ՝ https://healthconsumer.org:

Dignity Health-ի բոլոր հիվանդանոցները գների մասին տեղեկատվություն են տրամադրում մեր ամենապահանջված ծառայությունների համար: Գների մասին տեղեկատվությունը կարող եք գտնել այստեղ՝ https://dignity.msph.recondohealth.net/:

Վերջապես, մենք կարող ենք որոշ ժամկետանց հաշիվներ փոխանցել պարտքերի հավաքմամբ զբաղվող երրորդ կողմի գործակալություններին: Նահանգային և դաշնային օրենքը պահանջում է, որ պարտքեր հավաքողները ձեզ վերաբերվեն արդարացիորեն և արգելում է պարտք հավաքողներին կեղծ հայտարարություններ կամ բռնության սպառնալիքներ կատարել՝ կիրառելով անպարկեշտ կամ անվայել խոսք և ոչ պատշաճ հաղորդակցություն ունենալ երրորդ կողմերի հետ, այդ թվում ձեր գործատուի հետ: Բացառությամբ անսովոր հանգամանքների, պարտ հավաքողները կարող են չկապվել ձեզ հետ առավոտյան 8:00-ից առաջ կամ երեկոյան 9:00-ից հետո: Սովորաբար պարտք հավաքողը ձեր պարտքի մասին տեղեկատվությունը չպետք է տրամադրի որևէ այլ անձի, ով ձեր փաստաբանը կամ ամուսինը/կինը չէ: Պարտք հավաքողը կարող է կապվել մեկ այլ անձի հետ, որպեսզի հաստատի ձեր գտնվելու վայրը կամ դատական վճիռը կատարելու նպատակով: Պարտքերի հավաքման գործողությունների մասին մանրամասների համար կարող եք կապվել Դաշնային առևտրային հանձնաժողովի հետ 1-877-FTC-HELP (382-4357) հեռախոսահամարով կան առցանց՝ www.ftc.gov:

Վերանայվել է՝ 1 հուլիսի 2022 թ.

California-ի հիվանդանոցի արդար վճարման հաշիվների ներկայացման ծրագիր

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.
Եթե ձեր լեզվի հետ կապված օգնության կարիք ունեք, խնդրում ենք զանգահարել ստորև բերված հեռախոսահամարով կամ այցելել ֆինանսական խորհրդատուի գրասենյակը: Գրասենյակը բաց է՝ 8am-4:30pm և գտնվում է ստորև ցուցադրված հիվանդանոցի հասցեում: Հասանելի են նաև օժանդակ միջոցներ և ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչպիսիք են Բրայլի լեզվով փաստաթղթերը, խոշոր տառատեսակը, աուդիո և այլ մատչելի էլեկտրոնային ձևաչափերը: Այս ծառայություններն անվճար են:

Օգնեք վճարել ձեր հաշիվը

Կան սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող անվճար կազմակերպություններ, որոնք կարող են օգնել ձեզ հասկանալ վճարման հաշիվների ներկայացման և վճարման գործընթացը: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Health Consumer Alliance-ին 888-804-3536 հեռախոսահամարով կամ այցելել healthconsumer.org կայքէջը:

Հիվանդանոցի վճարման հաշիվների բողոքարկման ծրագիր

Հիվանդանոցի վճարման հաշիվների բողոքարկման ծրագիրը պետական ծրագիր է, որը վերանայում է հիվանդանոցի որոշումները այն մասին, թե արդյոք իրավասու եք օգնություն ստանալ հիվանդանոցի հաշիվը վճարելու համար: Եթե կարծում եք, որ ֆինանսական օգնությունը սխալմամբ են մերժել, կարող եք բողոք ներկայացնել Հիվանդանոցի վճարման հաշիվների բողոքարկման ծրագրին: Լրացուցիչ տեղեկությունների և բողոք ներկայացնելու համար այցելեք HospitalBillComplaintProgram.hcai.ca.gov կայքէջը:

Mercy Medical Center - Mt. Shasta
914 Pine St, Mt. Shasta, CA 96067 | Financial Counseling 530-926-7245 Patient Financial Services 888-488-7667 | www.dignityhealth.org/mercy-mtshasta/paymenthelp

Mercy Medical Center – Redding
2175 Rosaline Ave, Redding, CA 96001 | Financial Counseling 530-225-6312
Patient Financial Services 888-488-7667 | www.dignityhealth.org/mercy-redding/paymenthelp

St. Elizabeth Community Hospital
2550 Sister Mary Columba Drive, Red Bluff, CA 96080 | Financial Counseling 530-529-8079
Patient Financial Services 888-488-7667 | www.dignityhealth.org/stelizabethhospital/paymenthelp